



St. John's Armenian Church

ՄԲ. ՅՈՎԷ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAŽIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY

PHONE 356-1910

SOUTHFIELD, MICHIGAN

23 Հոկտեմբեր, 1962

Տիար Սուրէն Մանուէլեան,  
Դիւանապետ Առաջնորդարանիս Հայոց,  
Որ ի նիւ-Շորկ, Ն.-Ե.

Սիրելի Սուրէն,  
Այս նամակը աճապարանքով կը գրուի, այդ իսկ պատճառաւ շատ բաներ պէտք է գրուին: Մայր Հայրենիքէն եւ Սուրբ Էջմիածնէն վերադարձէ՞ր վերջ՝ առաջին նամակը ըլլալով ասիկա, սակայն ատոնք ուրիշ առիթի մը վերապահենք քու թոյլտուութեամբը եւ անցնի՞նք մեր ամիջական այժմեան գործին:

Կարգ մը բաներ կան որոնց կարգադրութիւնը քու բարեացակամութենէ՞ր կախուի ունի, եւ ատոնք հետեւեալներն են:

1.)- Նախ ամիջապէս տեղեկացնեմ որ Կիրակի 4 Նոյեմբերին մեր Հայկական գերեզմանատան Ննջեցելոց Յուշարձանին Անկիւնաքարի Չտեղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ եւ այդ առիթի կարգ մը բաներու պէտք պիտի ունենամ, Անկիւնաքարի տուփին մէջ գետեղուելու համար:

Կարգ մը բաներ որոնց պէտք պիտի ունենամ եւ որոնք խորհեցայ որ մեր Արտաքին Յարաբերութեանց Վարիչը՝ Տիար Պետրոս Նորհատ կրնայ կարգադրել, արդէն իրեն առանձինն գրած եմ, խուսափելով քեզի աւելորդ տաղտուկ պատճառելէ այդ մասին: Կուզեմ սակայն որ կարգադրուին հետեւեալները քու միջոցաւ: Ի մէջ այլոց պէտք ունեցածներս ասոնք են,-

ա.)- Անկիւնաքարի Չտեղման համար յատուկ արարողութեան մը կ'մտաքին պէտք ունիմ եւ կամ գոնէ աղօթք մը որ պատշաճի այս արարողութեան, Կարծեմ Սրբազանք բան մը պատրաստած էր մեր Նորակառոյց սրահին ընծայման համար գործածելու: Ատիկա կը խորհիմ, կրնայ գործածուիլ նաեւ, աննշան փոփոխութեամբ մը, մեր անկիւնաքարի գետեղման արարողութեան համար եւս:

Բ.)- ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ Ընթացիկ Թիւր: Կուզեմ որ շուտով ինծի գոյգ մը օրինակ ղրկուի օդային թղթատարով: Եիշեալ թերթին Նոյեմբերի թիւէն, եթէ Նոյեմբեր 4-էն առաջ ձեռքս կը հասնի, այլապէս Հոկտեմբերի թիւէն կուզեմ ղրկուի ինծի գոյգ մը օրինակ Նոյն նպատակով եւ դարձեալ Նոյն արագութեամբ:

գ.)- ԱՐՄԵՆԻԸՆ ԿԱՐՏԻԸՆԻ վերջին թիւը: Դարձեալ Նոյեմբերի եւ կամ Հոկտեմբերի թիւը պիտի ըլլայ ասիկա, այն պարագային որ Նոյեմբերի թիւը ատենին,- այսինքն Նոյեմբեր 4-էն առաջ պիտի չհասնի մեր ձեռքը: Դարձեալ այս եւս օդային թղթատարով:

Պիտի խնդրէի որ սոյն երկու թերթերը հարկ եղած համապատասխան անձնաւորութիւններէն ապահովուէին, այսինքն առաջինին պարագային Հայր Միւռօսէն, իսկ երկրորդին պարագային՝ Մկրտիչ Մարկիւսազէն: Իւրաքանչիւրին գատ գատ գրելու ժամանակը կը պակսի ինծի, եթէ կարելի է դուն պատուիրէ իրենց, եւ նայէ որ իրենց պարտականութիւնը կը կատարեն ատենին:

դ.) - ԷՉՄԻԱՍԻՆ ամսագրին վերջին թիւը, ալ որը որ ըլլայ: Բայց պիտի խնդրէի որ այս վերջին թիւը ամիջապէս որ Առաջնորդարանը ստանար, նախ քան անոնց կապոցով մեզի ղրկուելը, ինծի գոյգ մը ղրկէիր օգային թղթատարով, նայելով միանգամայն որ նոյեմբեր 4-էն առաջ ձեռքս անցնի, այլապէս չի թիւր որ հրապարակի վրայ վերջինն է այդ թիւը պիտի ստիպուիինք գործածել: Խնդրեմ ինծի այս մասին տեղեակ պահէ:

Վերոյիշեալ ները Անկիւնաքարի Ջետեղման Կարողութեան հետ կապ ունեցող բաներ են միայն: Պէտք ունինք նաեւ կարգ մը այլ բաներու ըստ հետեւեալին:

2.) - ՄԱՇՏՈՑ, - Բանի մը անգամ գրած եմ այս մասին Յակոբին, բայց ապարդիւն: Մայիսին երբ Նիւ-Եորկ էի թեմական Պատգամաւորական Ժողովին առթիւ, Առաջնորդարանէն կարգավոր գրքեր գնեցի, ի մէջ անոց Մաշտոցը: Ինչպէս եղաւ չեմ գիտեր երբ տեղս եկայ, ինծի ղրկուած կապոցը բացի տեսայ որ փոխանակ Մաշտոցի Տօնացոյց է որուն պէտք չունիմ: Բռնեցի ետ ղրկեցի այդ գիրքը, խնդրելով որ ինծի փոխարէն Մաշտոց ղրկուի, բայց մեր Յակոբը այնտեղացի չեղաւ: Ղըրկեցէք ինծի խնդրեմ 4 օրինակ այդ Մաշտոցէն, գինը 12 տուար ամիջապէս կը ղրկեմ, ինչմէ պահանջուելու պարագային:

3.) - Պէտք ունինք նաեւ Մկրտութեան վկայականներու տետրակներու: Մենք հոստեղ մեծք քանակութեամբ կ'սպառենք անոնցմէ, եւ գոնէ մեզի 10 օրինակ մը ղրկելու էք:

Ասոնցմէ գատ նաեւ յաճախ պէտք կ'ունենանք հետեւեալ կարգ մը գրքերուն, եթէ կ'կրնաք կարգադրել որ անոնցմէ մեզի տասական օրինակ մը ղրկուի գոհ կը մնանք: Այդ գրքերն են. -

- Զրիստոնէական կամ Բաթէթիգմ օճ տհը Արմէնիըն Չըրչ 10
- Սէքրիմէնդէնտ Բրէյլը օճ տհը Արմէնիըն Չըրչ 10
- Օրմանեան Պատրիարքի Տհը Արմէնիըն Չըրչ: 10

Կուզենք որ սոյն գրքերէն մեր Եկեղեցւոյ օճիսին մէջ, միշտ որոշ քանակութեամբ օրինակներ ունենանք, ի պահանջել հարկին գործածելու կամ ծախելու համար:

Ողջունիւ Սիրոյ  
*S. S. S.*  
Տ. Տիրան Բհնյ Գափագեան,  
ՀՈՎԻԻ

Յ, Գ, - Սոյն նամակը երբ կը փակէի, միտքս ինկաւ որ վերջին նամակը ստացած էի քեզմէ Օգոստ. 31 թուակրով, եւ հոս կուզեմ անդրադառնալ այն կարգ մը կէտերուն որոնք քրծարծուած են սոյն նամակին մէջ: Անշուշտ հասկնալի է որ շատ կարճ ըլլամ:

1) - Զեր փափաքին ի գոհացում, մեր ծխականներուն հասցէները Առաջնորդարան փոխանձուելու համար, հարկ եղած պատուէրը տուած եմ իր ատենին մեր քարտուղարին: Յուսամ ցարդ կատարած է իր պարտականութիւնը: Իսկ նորանոր հասցէներու փոփոխութիւններ կ'ըլլան միշտ: Իրեն պատուիրած եմ արդէն որ բոլոր հասցէները Արդու-տէյդ ընէ եւ ղրկէ Առաջնորդարան:

2) - Իսկ Տէնիսին մասին ալ հարցում եղած է իր արկածին առնչութեամբ: Փառք Տեառն լաւ է եւ օր ըստ օրէ կը բարեւալի իր վիճակը: Այս տարուան համար պաշտօնի կոչուած է Իւնիվըրսըթի օճ Միշիկանի Տիրոպորնի քէմբըսին մէջ: Շատ գոհ է իր գործէն: Ենորհակալութիւն ձեր ազնուասիրտ մաղթանքներուն համար:

3) - ԶԱՀԱԿԻՐԻ մասին յայտնածդ ղրուատիքին համար շնորհակալ եմ, եւ զայն կ'ընդունիմ իբրեւ քաջալերութիւն նուաստիս: Նորը աւելի ճոխ բովանդակութեամբ, 32 էջ, հրապարակ ելած է արդէն, եւ շուտով Առաջնորդարանը կ'ստանայ իր օրինակները:

ՆՈՅՆ *S. S. S.*

